# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 նոյեմբերի 2022թ. թիվ 744-Ա

## ԳՈՀԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով Գ.Սարգսյանի 01.11.2022թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված աշխատանքային կարգապահությունը խախտելու համար, այն է՝ աշխատանքի ժամին ուսումնական հաստատության աշխատակիցների հետ միասին աշխատանքից անհարգելի բացակայության համար, «ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Գոհար Սարգսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Գրիգորյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

04/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. նոյեմբերի 4
ք.Վանաձոր